ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/153

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.10.2018թ. թիվ 01.1/26-3/18301-18 գրությամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 27.09.2018թ. թիվ 01/61-20969 գրության հիման վրա, 09.10.2018թ. թիվ 01.1/26-3/18301-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.10.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը: Նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, հայտնելով, որ քաղվածքի համաձայն Ընկերության պարտավորության չափը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ կազմում է 31 383 ՀՀ դրամ, որը չի գերազանցում գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված շեմը:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն՝ Ընկերության պարտավորությունները կազմում են 53 370 ՀՀ դրամ, քանի որ նշված պարտավորությունների ցանկում ներառված է նաև դրոշմանիշային վճարը, որը սակայն Ընկերության անձնական հաշվի քարտի քաղվածքով չի երևացել, ուստի Ընկերությունը, մտածելով, որ անձնական հաշվի քարտի քաղվածքում առկա 31 383 ՀՀ դրամ պարտավորությունը չի գերազանցում ՀՀ օրենքով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել:

Ընկերության ներկայացուցիչը հայտնել է նաև, որ նույն Ընթացակարգի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ է. Սարգսյանի վարույթում քննվում է «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի բողոքը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստերը.</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.09.2018թ. թիվ 01/61-20969 գրությամբ հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասի դրույթի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից օրենքով սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի հայտարարությունը մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին համարվել է իրականությանը չհամապատասխանող, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ 53 370 ՀՀ դրամի չափով: Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով, 44-րդ կետով, հրավերի 7.15-րդ կետով, մերժել է Ընկերության հայտը և հրավերով սահմանված փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.10.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/153 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/153 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի թիվ 117 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքների ձեքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***12.09.2018թ.*** հայտ է ներկայացրել «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն:

2. «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 21 600 000 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.6-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 53 370 ՀՀ դրամի չափով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.4-րդ ենթակետով կայացված որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով, 44-րդ կետով և հրավերի 7.15-րդ կետով, մերժել է Ընկերության հայտը և հրավերով սահմանված փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.10.2018թ. թիվ 01.1/26-3/18301-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 27.09.2018թ. թիվ 01/61-20969 գրությունը և կից փաստաթղթերը, ՍՑ-ԱՄ-2018/153 ընթացակարգի քննության շրջանակներում «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի թիվ 117 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքների ձեքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***12.09.2018թ.*** հայտ է ներկայացրել «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն:

«Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 21 600 000 ՀՀ դրամ:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.6-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 13.09.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 53 370 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.4-րդ ենթակետով կայացված որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով, 44-րդ կետով և հրավերի 7.15-րդ կետով, մերժել է Ընկերության հայտը և հրավերով սահմանված փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 12.09.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 53 370 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 17.10.2018թ. էլեկտրոնային եղանակով ներկայացրել է 12.09.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի ***Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /12.09.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 31 369 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:***

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման թիվ 1 բաժնի կողմից 26.09.2018թ. տրված թիվ 2702 տեղեկանքը, համաձայն որի «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն 13.09.2018թ. դրությամբ ունի 53 381 ՀՀ դրամ պարտավորություններ, որից 22 000 ՀՀ դրամը դրոշմանիշային վճար է:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Սակայն, ուսումնասիրելով 12.09.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ ***Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է <u>31 369 ՀՀ դրամի</u> չափով ժամկետանց հարկային պարտավորություններ***, որը չի գերազանցում Ընկերության կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ Ընկերությունը հայտ է ներկայացրել՝ ենթադրելով, որ 31 369 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունը չի գերազանցում գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված շեմը:

Ուստի, հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, գտնում եմ, որ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.10.2018թ. թիվ 01.1/26-3/18301-18 գրությամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01511986) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ